Հարգարժան պարոն մարզպետ, հարգարժան պարոն նախարար, օգոստոսյան խորհրդակցության հարգելի մասնակիցներ.

Թույլ տվեք ներկայացնել Սյունիքի մարզում կրթության ոլորտի առկա իրավիճակը, 2016-2017 ուսումնական տարում իրականացված աշխատանքներն ու առկա խնդիրները:

Սյունիքի մարզում գործում է 118 դպրոց, որից 5-ը՝ ավագ, 75-ը՝ միջնակարգ, 35-ը՝ հիմնական, 2-ը՝ տարրական և մեկ հատուկ կրթահամալիր: 2016-2017 ուսումնական տարում մարզում աշակերտների թիվը կազմել է 16373, որից՝ ըստ դպրոցների. ավագ դպրոցներում՝ 1885, միջնակարգ դպրոցներում՝ 8473, հիմնական դպրոցներում՝ 5900, տարրական դպրոցներում՝ 17, հատուկ կրթահամալիրում՝ 98: Մարզի 66 դպրոցներ ունեն բազմահամակազմ դասարաններ: 23 դպրոցներում գործում են ռոբոտաշինության լաբորատորիաներ: 2017-2018 ուսումնական տարում մարզպետարանի ենթակայության դպրոցների աշակերտների կանխատեսվող թիվը՝ 14955 է, նախորդ տարվա պաստացի 14390 աշակերտի փոխարեն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 333 աշակերտներ ընդգրկված են մարզի 26 հանրակրթական ուսումնական հաստատություններում, 10-ը աշակերտ ստանում է տնային ուսուցում: Մարզի դպրոցներում աշխատողների թիվը 3562 է, որից ուսուցիչների թիվը 2116 է: Մարզում հաշվառվել է նախադպրոցական տարիքի 10887 երեխա. 6 քաղաքային և 28 գյուղական համայնքներում գործում են ընդհանուր թվով 52 նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝ 4308 սանով: Մարզի նախադպրոցական տարիքի երեխաների 41,06%-ը ընդգրկված է մանկապարտեզներում: Մանկապարտեզների աշխատողների թիվը 925 է, որից մանկավարժներ են 413-ը: «Կրթության մատչելիության ապահովում» ծրագրի շրջանակներում մարզի 8 հանրակրթական ուսումնական հաստատությունների նախադպրոցական խմբերում ընդգրկվել են 80 երեխաներ, 9 նախակրթարաններում դրամաշնորհային ծրագրով գործարկվել են նախադպրոցական խմբեր:

Սյունիքի մարզում գործում են 7 պետական քոլեջներ և 1 արհեստագործական ուսումնարան: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ, ուսանողների թիվը՝ 413, Կապանի պետական բժշկական քոլեջ, ուսանողների թիվը՝ 155, Կապանի արվեստի քոլեջ, ուսանողների թիվը՝ 100, Գորիսի պետական մանկավարժական քոլեջ, ուսանողների թիվ՝ 75, Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ, ուսանողների թիվը՝ 255, Սիսիանի պետական քոլեջ, ուսանողների թիվը՝ 216, Մեղրիի պետական քոլեջ, ուսանողների թիվը՝ 175: Քաջարանում գործում է արհեստագործական ուսումնարան՝ 95 ուսանողով:

Մարզում առկա են 1 պետական ԲՈՒՀ՝ Գորիսի պետական համալսարանը և 3 պետական ԲՈՒՀ-երի մասնաճյուղեր՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղը, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը:

Պարտուսից դուրս մնացած երեխաներ մարզում չկան:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել հատուկ կրթական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելու աշխատանքները շարունակելու ուղղությամբ: 2016 թվականից Սյունիքի մարզն անցավ «Համընդհանուր ներառման»: Սիսիանի և Գորիսի՝ հատուկ կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները վերակազմակերպվեցին

տարածքային մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Նրանցում սովորող աշակերտները տեղափոխվեցին հանրակրթական դպրոցներ:

2017 թվականից մարզում ներդրվեց ուսուցչի օգնականի ինստիտուտը: 132 ուսուցչի օգնականների և 22 հատուկ մանկավարժների հաստիքներն առաջնահերթ կարգով լրացվեցին հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում՝ առանց համապատասխան աշխատանքի մնացած փորձառու մասնագետներով:

Խորհրդակցության հարգելի մասնակիցներ, 2016-2017 ուսումնական տարում մարզի կրթության ոլորտում ունեցել ենք բազում հաջողություններ.

Մեզ համար առաջնահերթություն է համարվել առարկայական օլիմպիադաների կազմակերպումը: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել օլիմպիադաների դպրոցական պուլերին: 2016-2017 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաներին մասնակցել են մարզի հանրակրթական դպրոցների 5-12-րդ դասարանների ավելի քան 4500 աշակերտներ: Օլիմպիադաների մարզային փուլին մասնակցել են 778 աշակերտներ, որոնցից 100-ը՝ նաև հանրապետական փուլին: Հանրապետական փուլի մասնակից աշակերտներից 33-ը գրավել են մրցանակային տեղեր:

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել օլիմպիական աշակերտներին դասավանդող ուսուցիչներին:

2017թ. ընթացքում մարզպետարանի աջակացությամբ դպրոցներն ունեցան իրենց պաշտոնական կայքերը, որտեղ սահմանված կարգով տեղադրվում են եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով, համակարգիչների թիվը կազմում է 1310: Մեկ դպրոցում միջին հաշվով կա 11 համակարգիչ, իսկ յուրաքանչյուր 100 երեխային բաժին է ընկնում միջինը 9 համակարգիչ:

Ուսումնական տարվա ընթացքում մարզի 3՝ Մեղրիի թիվ 2 և Աճանանի ու Հարթաշենի միջնակարգ դպրոցներն առցանց դասեր են անցկացրել Սիսիանի ավագ դպրոցի հետ, որի արդյունքները գոհացնող են: Գալիք ուսումնական տարվանից կավելացվեն առցանց դասերին մասնակից դպրոցների թիվը: Առաջնահերթության կարգով առցանց դասերին մասնակից կդառնան այն դպրոցները, որոնք ունեն համապատասխան մասնագետ ուսուցիչների պակաս:

2016-2017 ուսումնական տարում միջնակարգ կրթության շրջանավարտների թիվը կազմել է 1071 աշակերտ, որոնցից 617-ը կամ 58%-ը ներկայացրել է միասնական քննության հայտ: Իններորդ դասարանը ավարտել են 1410 աշակերտներ, որոնք հաջողությամբ հանձնել են ավարտական և պետական ավարտական քննությունները:

2017թ. «Գերազանցության մեդալի» հավակնորդ 39 աշակերտներից 33-ը, նախորդ տարվա 31-ի դիմաց, կարողացել են հաջողությամբ հաղթահարել քննական շեմը և արժանանալ Գերազանցության մեդալի:

Մարզի հանրակրթական դպրոցներում՝ հիմնականում գյուղական սակավաթիվ աշակերտներ ունեցող դպրոցներում այս պահին առկա է ուսուցչի 61 թափուր աշխատատեղ՝ հիմնականում աշխարհագրություն, ֆիզիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, երաժշտություն, կերպարվեստ առարկաներից: Թափուր տեղերը համալրելու համար դպրոցներում պարբերաբար հայտարարվել են մրցույթներ, սակայն մասնագետ չլինելու պատճառով դրանք չեն համալրվել:

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում մարզի 41 դպրոցներում՝ տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է տաք, մնացածներում՝ չոր սնունդ: 2017 թվականի ապրիլի 1-ից «Տաք սնունդ» ծրագիրն իրականացնող 31 դպրոցների խոհարարներին, որոնց տարրական դասարանների աշակերտների թիվը քիչ էր 100-ից, «Սյունիքի զարգացման և ներդրման հիմնադրամի» կողմից տրվել է 20 հազարական ամենամսյա ֆինանսական աջակցություն:

Կրթության ազգային ինստիտուտի Կապանի և Գորիսի մասնաճյուղերում իրականացվել են մարզի հանրակրթական հաստատությունների ուսուցիչների, դասվարների, ՆՈՒՀ-երի տնօրենների և դաստիարակների վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստվել են 1231 մանկավարժներ:

2016-2017 ուսումնական տարում մարզի յուրաքանչյուր աշակերտի հատկացվել է պետական պարտադիր ծրագրով նախատեսված բոլոր դասագրքերը: Փաստորեն լուծվել է յուրաքանչյուր աշակերտին դասագրքով ապահովելու հիմնահարցը: Դպրոցներին բաշխվել է 34 անուն 23597 կտոր անվճար և 35 անուն 23531 կտոր վճարովի դասագիրք, 4 անուն 527 կտոր օժանդակ գրականություն և 2 անուն 1500 կտոր պաստառներ:

Դասագրքերի վարձավճարների հավաքագրման գործում Սյունիքի մարզը առաջատարներից է, հավաքագրումը կատարվել է 100 տոկոսով:

Սոցիալապես անապահով, ծնողազուրկ 210 երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի «Հասմիկ» և «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարներում:

2016-2017 ուստարում մարզի 118 դպրոցներից 49-ում իրականացվել է կենտրոնացված ջեռուցում, իսկ 71-ում ջեռուցումն իրականացվել է վառելափայտով և էլեկտրաէներգիայի օգտագործմամբ:

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից 2016 թվականի նոյեմբեր ամսին ՀՀ Սյունիքի մարզի թվով 23 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ, որոնց արդյունքները կրթության որակի մասով գոհացնող էին:

2017 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցներում կատարված ստուգման արդյունքում խախտումներ են արձանագրվել մարզի 18 դպրոցներում, որոնցից Գորայքի, Քաջարանի թիվ 2, Հացավանի, Կապանի թիվ 3 միջնակարգ և Կապանի թիվ 7 ու Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցների տնօրենների նկատմամբ կկիրառվի «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, իսկ Արավուսի տարրական, Գորիսի թիվ 3, Կապանի թիվ 5, Սիսիանի թիվ 2 հիմնական, Գեղիի և Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոցների տնօրենների նկատմամբ՝ «խիստ նկատողություն»:

Խախտումների գերակշիռ մասը բաժին է ընկնում ներառական կրթությանը, սակայն հարկ ենք համարում նշել, որ Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի կողմից սահմանված կարգով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատումն իրականացնելու նպատակով գրություններն ուղարկվել են «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի» տնօրենին, որոնց պատասխանը մինչև օրս դպրոցը չի ստացել:

Ինչ վերաբերվում է դպրոցաշինական աշխատանքներին նշեմ, որ 2017 թվականի ընթացքում պետական բյուջեի հաշվին՝ Սյունիքի մարզպետարանի պատվիրատվությամբ, մարզում իրականացվում են թվով չորս դպրոցների վերանորոգման աշխատանքներ, որոնցից երեքի՝ Հացավանի, Սիսիանի թիվ 2 և Սպանդարյանի դպրոցների աշխատանքներն արդեն ավարտվել են, իսկ Մեղրիի թ.1 դպրոցինը՝դեռևս ընթացքի մեջ են:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Դաստակերտ և Տոլորս համայնքների դպրոցներում:

Ընթացքի մեջ են ասիական զարգացման բանկի միջոցներով իրականացվող Կապանի թիվ 7 դպրոցի շինարարական աշխատանքները:

Կան բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում.

Հարգարժան պարոն նախարար, քանի որ Սյունիքի մարզի շրջանավարտները Գերազանցության մեդալների թվով առաջատար են, առաջարկում ենք վերականգնել Գերազանցության մեդալակիրներին նախկինում տրվող արտոնությունները՝ գոնե մանկավարժական մասնագիտությունների մասով՝ լավագույն շրջանավարտների մանկավարժի մասնագիտությունն ընտրելը խրախուսելու համար:

Շատ կարևոր է ուսուցչի խրախուսման նաև նյութական մասը, որը որոշակի չափով ապահովվում է տարակարգերի շնորհման միջոցով, սակայն որի չափն այնքան չնչին է, որ խթան չի հանդիսանում ուսուցիչների համար:

Կարևոր ենք համարում նաև երիտասարդ մանկավարժների խրախուսման հարցը.

Առաջարկում ենք մասնակիորեն վերականգնել (հեռավոր գյուղական, սակավաթիվ աշակերտներով դպրոցների մասով) պետական մանկավարժական ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո մասնագետին համապատասխան կազմակերպություն գործուղելու պրակտիկան, ովքեր կունենան հավելյալ աշխատավարձ և համապատասխան ճանապարհածախսի փոխհատուցում:

Առաջարկում ենք նաև վերանայել սահմանամերձ և թերի կոմպլեկտավորված դպրոցներում ուսուցչի մրցույթի կարգը, որտեղ թափուր տեղերի շաբաթական ծանրաբեռնվածությունը քիչ է կես դրույքից:

Հարգարժան մանկավարժներ թույլ տվեք շնորհավորել գալիք ուսումնական տարվա մեկնարկի, Գիտելիքի և դպրության օրվա առթիվ և ցանկանալ բեղմնավոր աշխատանք: